

Ա. ԱՔԵՂԵԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ԹԻԻ 12

ՀԱՅԱԿԱԿԱՆ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԽՆԴԻՐ

Ըստ ռուս — տաճկական Համաձայնագրի՝ նախաստորագրւած 26 յունւար (8 փետրւար) 1914 թ., Կոստանդնուպոլիս: *)

Ռուսաստանի լիազօր՝ Գուլկեւիչ, Տաճկաստանի լիազօր՝ Սայիդ-Հալիմ փաշա:

(Կողմերի մէջ) պայմանւորւած է, որ Արեւելեան Անատոլիայի երկու մարզերի գլուխ անւանւելիք երկու ընդհանուր քննիչների նշանակման հետ միաժամանակ՝ Բ. Դուռը մեծ պետութեանց պիտի ղեկավարէ հետեւեալ յայտագրով:—

Յօդ. 1.— **) Երկու օտարերկրացի ընդհանուր քննիչներ պիտի նշանակւին Արեւելեան Անատոլիոյի երկու մարզերի համար, պարոն Ա. . . , որպէս գլուխ այն մարզի, որ բաղկացած է Էրզրումի, Տրապիզոնի եւ Սըվազի վիլայէթներէից, եւ պարոն Բ. . . , որպէս գլուխ այն մարզի, որ բաղկացած է Վանի, Բիթլիսի, Խարքերդի եւ Դիարբեքիւրի վիլայէթներէից:

Յօդ. 2.— Ընդհանուր քննիչների զբաղման առարկան կազմում է՝ վարչական, դատական, ոստիկանական մարմինների եւ ժանդարմներէի հակազդիւր իրենց մարզերում:

Յօդ. 3.— Հանրային ապահովութեան մարմինների ոյժը անբաւարար լինելու պարագային՝ ղեկավարական ոյժերը, եթէ այդ պա-

*) Այս համաձայնագիրը վերջնական ձեւակերպութիւն չստացաւ եւ չիրագործւեցաւ՝ եւրոպական պատերազմի հետեւանալով:

**) [Բնագրի պարբերութիւնները յօդածների չեն բաժանւած, նշանակում ենք մենք]:

հանջէ ընդհանուր քննիչը, նրա տրամադրութեան տակ են դրւում, ի կատար ածելու համար այն միջոցները, որ ձեռք է առել նա իր իրաւասութեան սահմաններում :

Յօդ. 4.— Ընդհանուր քննիչները պաշտօնից հեռացնում են, նա-յած պարագաներին, բոլոր այն պետական պաշտօնեաներին, որ անպէտ են եւ կամ որոնց վատ ընթացքը հաստատւած է նրանց կողմից : Միաժամանակ, դատի են ենթարկւում այդ պաշտօնեաներից նրանք ովքեր կատարել են պատժական յանցանքներ : Ընդհանուր քննիչները հեռացւած կրտսեր պաշտօնեաներին փոխարինում են [այնպիսի] նորերով, որ կարող են դոճացում տալ [պետական] ծառայութեան մէջ մտնելու պայմաններին, նախատեսւած կանոններով եւ օրէնք-ներով :

Յօդ. 5.— Նրանք [ընդհանուր քննիչները] իրաւունք ունեն ն. Մեծ. Սուլթանի կառավարութեանը առաջարկներ անելու պետական բարձր պաշտօնեաներ նշանակելու մասին :

Յօդ. 6.— Պատճառարանւած կարճ հեռադրով նրանք անմիջապէս տեղեկացնում են պատկան նախարարութեանը ամէն մի պետական պաշտօնայի արձակման մասին, իսկ մէկ շաբաթայ ընթացքում էլ նախարարութեանն են յղում այդ պաշտօնեաներից ամէն մէկի թղթա-ծրարը մանրամասն պատճառարանութեամբ :

Յօդ. 7.— Կարելոր դէպքերում, երբ պահանջւում է շտապ միջոց-ներ ձեռք առնել, ընդհանուր քննիչները իրաւունք ունեն պաշտօնից անմիջապէս հեռացնելու դատական տեսչութեան անփոխարինելի պաշտօնեաներին, պայմանով որ դէպքի մասին անմիջապէս տեղե-կութիւն տրւի դատական գլխաւոր վարչութեան :

Յօդ. 8.— Եթէ վալիները կատարելու լինեն այնպիսի գործեր, որ պահանջւում են ժամանակաւորապէս խիստ միջոցներ ձեռք առնել, ընդհանուր քննիչները պարտաւոր են այդ մասին հեռադրական հա-ղորդագրութիւն անել Ներքին Գործոց նախարարութեան, որ եւ այդ դէպքը անմիջապէս ներկայացնում է նախարարների խորհուրդին : Վերջինս պարտաւոր է որոշում տալ ոչ ուշ քան ընդհանուր նահան-գապետի հեռադիրը ստանալու օրից չորս օր յետոյ :

Յօդ. 9.— Հողային վէճերը պիտի վճռեն ընդհանուր նահան-գապետների անմիջական հսկողութեան տակ :

Յօդ. 10.— Ընդհանուր քննիչների իրաւունքներին եւ պարտակա-նութիւններին վերաբերեալ աւելի մանրամասն հրահանգներ պիտի մշակեն նրանց անւանումից յետոյ, իրենց գործակցութեամբ :

Եթէ 10 տարւայ ընթացքում թափուր դառնալու լինեն ընդհանուր քննիչներն ու պաշտօնները, Բ. Դուռը յոյս ունի Մեծ Պետութեանց բարեհաճ աջակցութեանը՝ ընդհանուր քննիչներ ընտրելու գործում:

Յօդ. 11. — Օրէնքները, հրամանադիրները եւ կառավարական հաղորդադրութիւնները հրատարակութեան պիտի տրւին իւրաքանչիւր մարզում՝ տեղական լեզուներով: Վարչութեան մէջ եւ դատարանում կողմերից ամէն մէկը իրաւունք պիտի ունենայ օգտուելու իր լեզուից, եթէ ընդհանուր նահանգապետը հնարաւոր համարի այդ: Դատարանների սրտումները պիտի լսմադրեն տաճիւրէն, որին եթէ հնարաւոր է, պիտի կցւի եւ թարգմանութիւնը՝ կողմերի լեզուներով:

Յօդ. 12. — Ամէն մի վիլայէթի ժողովրդական կրթութեան նախահաշուով ցեղային տարրերի [ազգութեանց] բաժինը սահմանելու է ժողովրդական կրթութեան համար նրանց վճարելիք տուրքի համեմատութեամբ: Կայսերական (Օսմանեան) կառավարութիւնը ոչ մի արդելք չպիտի յարուցանէ այն բանի դէմ, որ հաւատակիցները մասնակցութիւն ունենան համայնքային գաղութների պահպանութեան գործում:

Յօդ. 13. — Խաղաղ ժամանակ Օսմանեան ամէն մի քաղաքացի պարտաւոր է զինւորական ծառայութիւն կատարել իր բնական զինւորական շրջանում: Եւ սակայն, կայսեր. կառավարութիւնը Եւթէնի, Ասսիրի եւ Նեջդի հեռաւոր մասերը ցամաքային զօրքեր զրկելիս՝ այդ զօրքերի կազմը պիտի լրացնէ կայսրութեան բոլոր մասերից, նրանցում ապրող բոլոր ժողովուրդների համեմատական քանակութեամբ: Բացի այդ, նա [Օսման. կառավարութիւնը] ծովային զօրամասեր կընդունի նորակոչներ՝ կայսրութեան բոլոր մասերից:

Յօդ. 14. — Համիդիէ զօրագունդերը պիտի վերակազմեն, որպէս պահեստի հեծեալներ:

Յօդ. 15. — Նրանց զէնքերը կը պահեն զինամթերանոցներում եւ կը տրւին միմիայն զօրահաւաքի եւ զօրախաղերի ժամանակ: Նրանք ենթակայ կը լինեն այն զօրաբաժինների հրամանատարներին, որոնց շրջանում ուր կը գտնւին: Խաղաղ ժամանակ՝ զօրագունդերի, հեծելավաշտերի եւ դասակների պետերը կընտրւին օսմանեան գործող բանակի սպաների միջից: Այդ գունդերի զինւորները զինւորական ծառայութիւն կանեն մէկ տարի: Այդ գունդերը մտնել կարենալու համար՝ զինւորները սեփական հաշուով պարտաւոր են ձեռք բերել ձի, լրիւ հանգերձանքով միասին:

Տւեալ շրջանում ապրող ամէն ոք, առանց ցեղի եւ կրօնի խտրութեան, որ կենթարկւի այս պահանջներին, կարող է մտնել այդ գուն-

դերը: Զօրահաւաքի եւ զօրախաղերի ժամանակ դումարաւծ այդ գունդերը ենթակայ են կարգապահական նոյն այն միջոցներին, ինչ որ կանոնաւոր զօրքերը...

Յօդ. 16.— Երկու մարդերում գոյութիւն ունեցող տարրեր կրօնների հետեւողների ճշգրիտ համեմատականութիւնը կորուչի վերջնական մարդահամարով, որ տեղի պիտի ունենայ ընդհանուր քննիչների հսկողութեան տակ ամենակարճ ժամանակամիջոցում, հնարաւորութեան դէպքում՝ մէկ տարուց ոչ ուշ:

Յօդ. 17.— Մինչ այն՝ ընդհանուր [մարդային] խորհուրդների եւ Վանի ու Բիթլիսի վիլայէթների կոմիտէների անդամները կընտրւին կէս առ կէս [համեմատութեամբ], մահմեդականներից եւ ոչ մահմեդականներից:

Յօդ. 18.— Եթէ երդրումի վիլայէթում վերջնական մարդահամարը չվերջանայ մէկ տարւայ ընթացքում, ընդհանուր խորհուրդի անդամները կընտրւին հաւասարութեան նոյն այն սկզբունքով, ինչ որ է վերոյիշեալ երկու վիլայէթներում:

Յօդ. 19.— Սըվադի, Պարբերդի եւ Դիարբեքիւրի վիլայէթներում ընդհանուր խորհուրդների անդամները կընտրւին այժմ իսկ՝ համեմատականութեան սկզբունքի հիման վրա: Այդ բանի համար՝ մահմեդական ընտրողների [պատուիրակների] թիւը կորուչի ընտրական այն ցուցակներով, որ հիմք են ծառայել վերջին ընտրութեանց համար: Իսկ ոչ — մահմեդականների թիւը կը սահմանւի համաձայն այն ցուցակների, որ կը ներկայացուն նրանց համայնքների կողմից:

Յօդ. 20.— Եւ, սակայն, գործնական այլ եւ այլ դժւարութիւններ եթէ անկարելի դարձնեն այդ ժամանակաւոր ընտրական եղանակը, այդ դէպքում, բաշխելու համար տեղերը երեք վիլայէթների — Սըվադ, Պարբերդ եւ Դիարբեքիւր — ընդհանուր խորհուրդների միջեւ, ընդհանուր քննիչները իրաւունք կունենան ուրիշ համեմատականութիւն առաջարկելու — աւելի համապատասխան վերոյիշեալ վիլայէթների ժամանակակից կարիքներին եւ պահանջներին:

Յօդ. 21.— Բոլոր այն վիլայէթներում, ուր ընդհանուր խորհուրդները կընտրւին համեմատականութեան սկզբունքներով, փոքրամասնութեանց ներկայացուցչութիւնը կապահովուի կոմիտէներում...

Յօդ. 22.— Վարչական խորհուրդների անդամները առաջւան նրման կընտրւին կէս առ կէսի [համեմատութեամբ], մահմեդականներից եւ ոչ — մահմեդականներից:

Յօդ. 23.— Եթէ ընդհանուր քննիչները անյարմար չգտնեն՝ մահ—
մեղականների եւ ոչ — մահմեղականների հաւասարութեան սկզբուն—
քը կը կիրառուի նաեւ ոստիկանութեան ու ժանդարմերիայի կազմի
համար երկու մարդերում, որ չափով որ ազատ տեղեր բացւին:

Յօդ. 24.— Հաւասարութեան նոյն այդ սկզբունքը կը կիրառուի
որչափ հնարաւոր է, նաեւ երկու մնացեալ պաշտօնները բաշխելու
ժամանակ:

**

ԹԻԻ 13

ԳԵՐՄԱՆԻԱ ԵՒ ՏԱՃԿԱՍՏԱՆ

Գերման — տաճկական Համաձայնագիրը զինակցութեան մասին,
կնքւած 6 Օգոստոս, 1914 թ., Կ. Պոլսում:

Կ. Պոլսի գերման դեսպան Վանգենհայմի յայտագիրը (նոտա),
յղւած տաճիկ կառավարութեան:

Եթէ Օսմանեան կառավարութիւնը, հաւատարիմ մնալով իր
պարտաւորութեանց, պատերազմի մտնէ Երրեակ Համաձայնութեան
դէմ, Գերմանիան կապահովէ նրան հետեւեալ առաւելութիւնները.—

1.— Իր աջակցութիւնը՝ վերացնելու համար անանձնաշնորհում—
ները (կապիտալափոխները):

2.— Հաշտութիւն չի կնքուի, մինչեւ որ թշնամին չսպարպէ հնարա—
ւոր դրաման ենթարկելիք հողամասերը:

5.— Գերմանիան կը հարկադրէ՝ շտկել Օսմանեան կայսրութեան
արեւելեան սահմանները այն ձեւով, որ ապահովուի Տաճկաստանի
անմիջական շփումը Ռուսաստանում ապրող մահմեղական բնակչու—
թեան հետ:

6.— Գերմանիան կ'օգտագործէ իր ազդեցութիւնը այն բանի հա—
մար, որ Տաճկաստանը պատշաճ փոխարինութիւն ստանայ իր կո—
րուստների համար:

Վերը թւած պայմանները, բացառութեամբ յօդ. 2-ի [վերարե—
րում են Ռումանիային եւ Բուլղարիային], այն չափով միայն պար—
տադիր կը լինեն Գերմանիայի համար, որ չափով որ նա եւ իր դաշ—
նակիցները յաղթական դուրս կը գան, ներկայ պատերազմից եւ ի
վիճակի կը լինեն իրենց պայմանները թելադրելու պատերազմիկ—
ներին:



ԻԻԻ 14

ՌՌԻՍԱՍՏԱՆ

Արտաքին գործոց նախարար Սազանովի գաղտնի յուշագիրք՝ ուղղված Մեծն Բրիտանիայի եւ Ֆրանսիայի ղեկավարներին, Փոքր Ասիայի եւ Արարիայի գոտիների մասին, Պետրոգրադ, 4/17 մարտ, 1916 թ.:

Նկատի ունենալով որ անգլեկոֆրանսական նախագիծը՝ Փոքր Ասիայում եւ Արարիայում զանազան գոտիներ սահմանելուն վերաբերեալ՝ յատուկ յանձնախումբի վերանայման ենթակայ է, այդ առթիւ լինելիք մտքերի փոխանակութիւնը հարկ է որ ներկայիս յանդիւնդհանուր սկզբունքների ձեւակերպման, այսինքն՝

1.- Ռուսաստանի կառավարութիւնը պատրաստ պիտի լինի յայտարարելու իր կատարեալ անշահագրգռութիւնը այն երկրամասի վերաբերմամբ, որ տարածւում է Ամաղիայի, Իրն - Օմարի, Դիարբեքի, Սմասուրի, Մարաշի, Ատանայի վրայով անցնող զծից հարաւ եւ առանց որ եւ է զԺլարութեան պիտի ընդունի ամէն մի համաձայնութիւն, որ կարող է այդ մասին տեղի ունենալ Ֆրանսայի եւ Անգլիայի միջեւ:

2.- Նա [Ռուսաստանի կառավարութիւնը] պնդում է, որ անհրաժեշտ է ռուսական գոտիի մէջ մտցնել Բիքլիսի անցքերը Ռւմիոյ [?] լճի շրջանում եւ դրա փոխարէն առաջարկում է՝ Ֆրանսիային զիջել Փոքր Հայաստանի հողամասը, Սըվազ - Խարքերդ - Կեսարիոյ միջեւ:

Ինքնրստինքեան հասկանալի է, որ Ռուսաստանի համաձայնութիւնը նախընթաց կէտերի վերաբերմամբ՝ պայմանաւորւած է մնում Ֆրանսիայի եւ Անգլիայի հետ նրա [կայացրած] համաձայնութեան իրականացումով, Կոստանդնուպոլսի եւ նեղուցների մասին:

ԾԱՆՕԹ.- Այս համաձայնութեանը միանում է եւ Իտալիան, 6/19 Նոյ. 1916 թ. զաղտնի յուշագրով: [Տես թիւ 17]:



ԹԻԻ 15

ԲԱԺԱՆՈՒՄՆ ԱՍԻԱԿԱՆ ԹԻԻՐՔԻՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Գաղտնի Համաձայնութիւն Ռուսաստանի, Անգլիոյ եւ Ֆրանսայի միջեւ, Ասիական Թիւրքիան եւ Հայաստանը իրարու մէջ բաժա-

ներու մասին, Պետրոգրադ — Լոնդոն, 13/26 Ապր. — 19 Օգոստ. (1 Սեպտ.) 1916 թ.:

Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Սազոնովի յուշաթուղթը յանուն Պետրոգրադի Փրանսական դեսպանի, 13/26 Ապր. 1916 թ.:

... Պատիւ ունիմ յայտնելու Ձերդ Գերազանցութեան, թէ արարական պետութեան կամ պետութեանց դաշնակցութիւն կազմելու, այլ եւ Սուրիոյ, Կիլիկիայի ու Միջագետքի հողամասը [ներանց վերաբերմամբ ադատօրէն չարժեւելու իրաւունքը] վերապահելու մասին պ. ժողով Պիկոյի հետ իմ ունեցած զրոյցներէս հետեւանքով՝ կայսերական կառավարութիւնը պատրաստ է հաստատելու իրեն յայտնւած հիմունքներով կայացւած համաձայնութիւնը, հետեւեալ պայմանները կատարելու պարտաւային. —

1. — Ռուսաստանը զրաւում է երգրումի, Տրապիզոնի, Վանի եւ Բաղէշի շրջանները՝ մինչեւ այն կէտը Սեւ Ծովի ափին Տրապիզոնից արեւմուտք, որ կորուչէր յետոյ:

2. — Վանից եւ Բաղէշից հարաւ՝ Մուշի, Սղերդի, Տիգրիսի հոսանքի, ձեզիրէ — Իսին — Օմարի եւ Ամաղիայի ու Մերհէվէտի շրջանի վրա իշխող լեռնադադաթները դժի միջեւ տարածուող Քիւրդիստանի շրջանը պիտի զիջէ Ռուսաստանին, որ դրա փոխարէն պիտի ֆրանսայի սեփականութիւնը ճանաչէ Ալա — Դադի, Կեսարիայի, Ալ — Դադի, Իլդիզ — Դադի, Ջարայի, Ակնի, Խարբերդի միջեւ ընկնող հողամասը: Բացի այդ, սկսած Մերհէվէտի շրջանից՝ արար պետութեան սահմանը պիտի անցնի այն լեռնադադաթները դժով, որ ներկայիս բաժանում են Օսմանեան հողը Պարսկաստանից...

ԾԱՆՈԹ. — Պետրոգրադի Փրանսական դեսպան Պալէոլոգը նոյն թւակիւր յայտադրով յայտնեց Սազոնովին Փրանսական կառավարութեան համաձայնութիւնը նրա [Սազոնովի] յուշաթղթի [մէջ բերւած] կէտերին: Լոնդոնի ուսու դեսպան Բենկենդորֆի 1916 թ. 17/30 մայիս հաղորդագրութիւնից երեւում է, որ բրիտանական արտաքին գործոց նախարար Գրէյը 1916 թ. 10/23 (?) մայիս յայտադրով Բենկենդորֆին հաղորդել է բրիտանական կառավարութեան պատրաստակամութիւնը՝ միանալու ուսու — Փրանսական 13/26 Ապր. համաձայնութեանը, պայմանով որ Օսմանեան կայսրութեան բոլոր այն մասերում որ Ռուսաստանին պիտի զիջէին, պահպանւին օսմանեան կառավարութեան կողմից բրիտանական հպատակներին տրւած կոնցեսիաները...

Իտալիոյ միացումը այս համաձայնութեան՝ տե՛ս 1916 թ. Նոյ. 6/19 յուշաթուղթը, վարը՝ թիւ 17 :

*
**

ԹԻԻ 16

ՖՐԱՆՍԱ ՆԻ ԱՆԳԼԻԱ.

Ֆրանս – անգլիական Գաղտնի Համաձայնութիւն՝ Փոքր Ասիոյ վերաբերմամբ :

Խօսուած է այն մասին, թէ Ֆրանսան եւ Անգլիան տրամադիր են ճանաչելու եւ պաշտպանելու արաբական անկախ պետութիւնը եւ կամ արաբ պետութեանց համադաշնակցութիւնը, առաջին, այսինքն՝ Փրանսական եւ երկրորդ, այսինքն՝ բրիտանական գօտիներում : Ու մանրամասնօրէն որոշուած են այդ գօտիների սահմանները : Ի միջի այլոց առած է այնտեղ (կէտ 5), «Ալեքսանդրէքը լինելու է ազատ նաւահանգիստ» . . . :

ԹԻԻ 17

ԻՏԱԼԻԱ.

Գաղտնի յուշաթուղթ, որով Իտալիան միանում է Ֆրանս – անգլիական Համաձայնութեանը՝ Փոքր Ասիոյ վերաբերմամբ : Յուշաթուղթը ներկայացւած է 1916 թ. 6/19 Նոյ., Պետրոգրադի իտալական դեսպան Կարլոտի կողմից՝ Ռուսաստանի արտաքին գործոց նախարար Շտիրմէրին :

Արքայական կառավարութիւնը ծանոթացաւ այն վաւերաթուղթերին, որ հաղորդեց սոյն Հոկտ. 5-ին լորդ Գրէյը մարքիզ Իմպերիալին, այսինքն՝ Ֆրանս – անգլիական համաձայնութեան բնագիրը Փոքր Ասիոյ վերաբերմամբ : [Տե՛ս վերը, թիւ 16] :

5.— Ռուս կառավարութեան 4/17 մարտ 1916 թ. յուշագրի բնագիրը, Փոքր Ասիոյ վերաբերմամբ : [Տե՛ս վերը, թիւ 14] :

6.— Ֆրանս – ռուսական 13/26 Ապր. 1916 թ. համաձայնութեան բնագիրը, նոյն հարցի վերաբերմամբ : [Տե՛ս վերը, թիւ 15] :

. . . Իտալական կառավարութիւնը իր կողմից սպասում է, որ կայսերական [ռուս.] կառավարութիւնը Իտալիոյ վրա եւս պիտի տարածէ, որչափով որ Ատանայի շրջանին է վերաբերում այն, իր անշահազրգուծեան սկզբունքը . . .

Արքայական [խալ.] կառավարութիւնը սիրով միանում է նաեւ Անգլիայի ու Ֆրանսայի միջեւ կայացւած համաձայնութեան . . . այն վերապահութեամբ, որ պիտի ճանաչին և նրա [խալ. կառավ.] նկրտումները Ատանայի, Գոնիայի եւ Այտընի հողամասի վերաբերմամբ . . .

**

ԹԻԻ 18

ԲԱՆԱԶԵԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ

Ընդունւած 1917 թ. Յունիս 20-ին (3 Յուլիս) Խորհուրդների Համառոտական Համագումարի կողմից :

1.— . . . Սահմանադիր Ժողովը միայն, որ պիտի ստեղծէ Ժողովրդավար նոր Ռուսաստանի հիմունքները, կը ստեղծէ եւ բոլոր ազգութեանց իրաւունքների անխախտելիութիւնը երաշխաւորող պայմանները :

2.— Միեւնոյն ժամանակ . . . Յեղափոխական Ռուսաստանը անմիջապէս ոտք պիտի կոխէ վարչութեան ապակենտրոնացման ճամբու վրա, լայն ասպարէզ բանալով դեմոկրատիայի ինքնագործունէութեան եւ բոլոր ազգութիւնների Ժողովրդական ոյժերի զարգացման առաջ :

3.— Ազատ Ռուսաստանի ազգութեանց իրաւունքները ապահովելու նպատակով՝ յեղափոխական դեմոկրատիան Սահմանադիր Ժողովում կեանք պիտի բերէ քաղաքական լայն ինքնօրէնութիւն (աւտոնոմիա) այն շրջանների [Երկրամասերի] համար, որ ունին ազգաբնակչական եւ սոցիալ — տնտեսական առանձնայատկութիւններ . . .

4.— Յառաջիկայի համար, մինչեւ որ Սահմանադիր Ժողովը վերջնապէս կը լուծէ ազգային հարցը, Համագումարը առաջարկում է Ժամանակաւոր Կառավարութեանը՝ անմիջապէս իրագործել սկսել հետեւեալ միջոցները — ա) Հրատարակել Ժամանակաւոր Կառավարութեան կողմից մի յայտարարագիր, որով ճանաչել բոլոր ազգութիւնների ինքնօրոշման իրաւունքը մինչեւ անջատումն իսկ, համաժողովրդական Սահմանադիր Ժողովի մէջ համաձայնութեան [զալու] հետեւանքով. բ) Հրատարակել մի հրամանադիր (դեկրետ)՝ լեզուների հաւասարութեան եւ ուսւ լեզուն համապետական լեզու պահելու, այլ եւ բոլոր Ժողովուրդների քաղաքացիներին իրաւունք ու հնարաւորութիւն վերապահելու մասին՝ օգտուելու [իրենց] Ժողովրդական [ազգային] լեզուից՝ քաղաքացիական եւ քաղաքական իրաւունքները

կիրարկելու միջոցին, ինչպէս նաեւ դպրոցում, դատարանում, ինքնավարական մարմիններում, պետական իշխանութեան հետ յարաբերելիս եւ այլն. գ) Ժամանակաւոր Կառավարութեան կից կազմել... Ազգային Գործոց Խորհուրդ, ուրտեղ պիտի զտնեն Ռուսաստանի բոլոր ազգութեանց ներկայացուցիչները, նպատակ ունենալով մի կողմից նիւթ պատրաստել Ազգային Հարցի մասին Համառուսական Սահմանադիր Ժողովի համար, միւս կողմից էլ մշակել այն միջոցները, որոնցով կարելի պիտի լինի կանոնաւորել բուն իսկ ազգային այն յարաբերութիւններն ու ձեւերը, որոնցով հնարաւորութիւն պիտի տրուի ազգութիւններին՝ լուծելու իրենց ներքին կեանքի հարցերը:

Ծ. ... Համագումարը դէմ է արտայայտուում բոլոր այն փորձերին որ նպատակ ունին ազգային հարցերը լուծել մինչեւ Սահմանադիր Ժողով՝ յայտարարական եղանակով, Ռուսաստանից անջատելով նրա առանձին մասերը եւ այլն...

ԹԻԻ 19

ԻՏԱԼԻԱ, ԱՆԳԼԻԱ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Գաղտնի Համաձայնութիւն Փոքր Ասիոյ հարցի մասին, կայացւած 1917 թ. Օգոստ. 18/22-ին Լոնդոնում եւ Փարիզում, մի կողմից Իտալիոյ եւ միւս կողմից Մեծն Բրիտանիոյ եւ Ֆրանսայի միջեւ:

1. — Իտալական Կառավարութիւնը տալիս է իր համաձայնութիւնը այն որոշումների համար, որ պարունակում են 1916 թ. 9 — 16 մայիս Փրանս — բրիտանական համաձայնութեան 1 եւ 2 կէտերը: [Տե՛ս վերը՝ թիւ 16]: Ֆրանսական եւ բրիտանական Կառավարութիւնները իրենց կողմից նոյն հիմունքներով ճանաչում են Իտալիոյ իրաւունքը ... գոտիների վերաբերմամբ: [Տրւում են մանրամասնութիւններ, ուր ասւած է ի միջի այլոց. «Իտալիան պարտաւորուած է Զմիւռնիայում ազատ նաւահանգիստ հիմնել, որչափով որ այդ վերաբերուած է Ֆրանսայի եւ Մեծն Բրիտանիայի առեւտրին... »:]

ԹԻԻ 20

ՌՈՒՍԱՍՏԱՆ

Ռուսաստանի ժամանակաւոր Կառավարութեան 1917 թ. 25 Սեպտեմբեր (8 Հոկտ.) յայտարարագիրը՝ պատերազմի առաջադրութեանց եւ Ազգային Հարցի մասին:

... Ազգային Հարցի մասին. — Ճանաչումն բոլոր Ժողովուրդներին ինքնորոշման իրաւունքի, Սահմանադիր Ժողովի կողմից մշակելիք հիմունքներով:

Մշակումն եւ հրատարակումն այնպիսի օրէնքներին, որոնք ազգային փոքրամասնութիւններին իրենց մշտական բնակութեան վայրերում պիտի ապահովեն մայրենի լեզուի օգտուելու իրաւունքը՝ դպրոցում, դատարանում, ինքնավարութեան մարմիններում եւ պետական իշխանութեան տեղական մարմիններին հետ յարաբերելիս: Ժամանակաւոր Կառավարութեան կից հիմնումն Ազգային Գործոց Սորհուրդի, ուր Ռուսաստանի բոլոր ազգութիւնները պիտի ունենան իրենց ներկայացուցչութիւնը, եւ որ իրեն նպատակ պիտի առաջադրէ՝ Ազգային Հարցի մասին նիւթ պատրաստել Սահմանադիր Ժողովի համար:

Բերլին

(Շարունակելի)

